«ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱՍՏՈՒԴԻԱՅԻ ՆՈՐ ՏԱՂԱՎԱՐԻ ԲԱՑՈՒՄ

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ «Շողակաթ» հեռուստասպուդիայի նոր տաղավարի բացումը: Բացման արարողությանը մասնակցում էին հոգևոր հայրեր, արտերկրյա հյուրեր, ֆիլմարվեստի և հեռուստատեսության ներկայացուցիչներ: Այն այսուհետև գործելու է Մայր Աթոռի շրջափակից ներս, հին ճեմարանի շենքում, ունենալու է տեխնիկական բոլոր չափանիշներին համապատասխան տաղավար, մոնտաժային սրահներ:

Իր երկարամյա գործունեության ընթացքում սպուդիան հանրապետության գրեթե բոլոր հեռուստաալիքներով հեռուստադիտողի ուշադրությանն է ներկայացնում տեսահոլովակներ, հաղորդաշարեր, հեռուստածրագրեր և ֆիլմեր, որոնք ծանուցում են եկեղեցական տոների և կրոնական արարողությունների մասին, մեկնում սրբազան ավանդություններն ու աստվածաշնչյան պատմությունները:

Հեռուստատեսային ոլորտում հոգևոր թեմաներով տեսանյութերի արտադրությունը խթանելու և Հայ Առաքելական Եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Շողակաթ» հեռուստասպուդիան և 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովը նոր տաղավարի բացման առիթով նախաձեռնել էին հոգևոր թեմայով տեսանյութերի ամենամյա փառատոն-մրցանակաբաշխություն՝ լավագույն աշխատանքի համար սահմանելով «Շողոկաթ» մրցանակ: Փառատոնին ներկայացվել էր 32 աշխատանք:

Ժյուրիի անդամները հեռուստատեսության, ֆիլմարվեստի և մշակույթի ներկայացուցիչներ էին, որոնց որոշման համաձայն փառատոնի լավագույն հոլովակ ճանաչվեց Տիգրան Պասկևիչյանի և Արա Շիրինյանի «Ներս» տեսանյութը, լավագույն հեռուստահաղորդում ընտրվեց «Վարդաձորի Խաչքարը» (հեղինակ՝ Էդիկ Բաղդասարյան, ռեժիսոր՝ Արա Շիրինյան): Հետաքրքիր մտահղացման համար խրախուսական մրցանակի արժանացավ Տիգրան Պասկևիչյանը, ինքնատիպ ռեժիսոր ճանաչվեց Արա Շիրինյանը, լավագույն օպերատորներ՝ Բենիկ Կարապետյանը և Տիգրան Գևորգյանը: Գնահատող հանձնախմբի կարծիքով թեև ներկայացված աշխատանքներից և ոչ մեկը արժանի չէր «լավագույն հեռուստաֆիլմ» մրցանակի, այդուհանդերձ հատուկ խրախուսական մրցանակ շնորհվեց «Ծարաված մարդուն» ֆիլմի հեղինակներին: Ինչ վերաբերում է գլխավոր մրցանակին, ապա ժյուրիի որոշմամբ արժանի հավակնորդ չգտնվեց:

Փառատոնի մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ նոյեմբերի 3-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի: